ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ

ք. Վանաձոր «13» «ապրիլ» 2014 թ.

2014 թվականի ապրիլի 13-ին տեղի ունեցավ ՀՔԱՎ աշխատակիցների արտահերթ ժողով, որին մասնակցում էին

Արթուր Սաքունց -Կազմակերպության նախագահ- ժողովի նախագահ
Վարդինե Գրիգորյան-գրասենյակի կառավարիչ- ժողովի քարտուղար
Մանուշակ Օհանյան-գլխավոր հաշվապահ-կազմակերպության անդամ,
Օֆելյա Զալյան-ծրագրերի համակարգող-կազմակերպության անդամ,
Արտուր Հարությունյան-իրավախորհրդատու-կազմակերպության անդամ
Արայիկ Զալյան-իրավաբան
Անի Չատինյան- իրավաբան
Սյուզաննա Սողոմոնյան-իրավաբանի օգնական
Տաթևիկ Սիրադեղյան-իրավախորհրդատու
Անահիտ Չիլինգարյան-շահերի պաշտպանության բաժնի համակարգող
Սուսաննա Դավթյան- շահերի պաշտպանության բաժնի մասնագետ
Հասմիկ Կարապետյան-հասարակայնության հետ կապերի մասնագետ
Գոռ Աղաջանյան-տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ
Մարիետա Թեմուրյան-մոնիթորինգի մասնագետ
Արմինե Սադիկյան –խաղաղասիրության բաժնի համակարգող
Նազելի Մովսեսյան-խաղաղասիրության բաժնի օգնական:

Օրակարգ

1. պարտադիր կուտակային համակարգի հետ կապված կազմակերպության աշխատակիցներ Արայիկ Զալյանի, Օֆելյա Զալյանի, Արտուր Հարությունյանի, Սյուզաննա Սողոմոնյանի, Տաթևիկ Սիրադեղյանի, Անի Չատինյանի, Անահիտ Չիլինգարյանի, Սուսաննա Դավթյանի, Հասմիկ Կարապետյանի, Գոռ Աղաջանյանի, Վարդինե Գրիգորյանի, Մարիետա Թեմուրյանի, Նազելի Մովսեսյանի, Արմինե Սադիկյանի, Սուզաննա Ղարաղաշյանի, Լիլիթ Ղամբարյանի, Շողեր Հակոբյանի (այսուհետ՝ դիմումատուներ) դիմումներով բարձրացված խնդրի քննարկում:

Քննարկման ընթացքում

1. դիմումատուները բանավոր ներկայացրեցին իրենց պահանջը, իրավական և փաստական հիմքերը՝ նշելով, որ իրենք պարտավորվում են կրել գումարների չհաշվարկման և չփոխանցման արդյունքում առաջացած հնարավոր բացասական ֆինանսական հետևանքները,
2. կազմակերպության հաշվապահը ներկայացրեց հաշվապահական ռիսկերի վերաբերյալ իր մտահոգությունները,
3. կազմակերպության իրավաբանները ներկայացրեցին իրավաբանական եզրակացություն դիմումատուների պահանջների վերաբերյալ:

Քննարկման արդյունքում պարզվեց՝

1. «Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) համաձայն՝ օրենքով սահմանված պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորությանը վերաբերող դրույթները ուժի մեջ են մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:
2. 2013 թվականի դեկտեմբերի 16-ին Ազգային ժողովի թվով 36 պատգամավոր դիմում են մուտքագրել ՀՀ Սահմանադրական դատարան, որով խնդրել են հակասահմանադրական և անվավեր ճանաչել «Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի 5, 7, 8, 37, 38, 45, 86 հոդվածները:
3. 2014 թվականի հունվարի 24-ին ՍԴԱՈ-3, որպես որոշման վերոնշյալ դիմումի ապահովման միջոց, մինչև գործի դատաքննության ավարտը Սահմանադրական դատարանը կասեցրեց քննության առարկա օրենքի 76-րդ հոդվածի և 86-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունները:
4. 2014 թվականի ապրիլի 2-ին Սահմանադրական դատարանը կայացրեց թիվ 1142 որոշումը:
5. Կայացված որոշումը ենթարկվեց տարաբնույթ մեկնաբանությունների, քանի որ չնայած ՀՀ Սահմանադրական դատարանը Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, 7-րդ հոդվածի 1-ին ու 11-րդ մասերը, 13-րդ հոդվածի 2-րդ մասը, 49-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ հոդվածի 6-րդ կետը, 44-րդ հոդվածի 1-ին մասը, 76-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, սակայն նույն որոշման 7-րդ կետով վկայակոչելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասը՝ սահմանել է, որ Սահմանադրությանը հակասող ճանաչելու իրավանորմերի ուժի կորցնելու վերջնաժամկետը 30.09.2014 թվականն է:
6. Հաշվի առնելով 2014 թվականի հունվարի 24-ի ՍԴԱՈ-3 որոշումը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները չեն կատարել կենսաթոշակային ֆոնդի և կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ընտրություն և հայտնել են գործատուին, որ դեմ են իրենց անունից կուտակային կենսաթոշակների վճարմանը: Հիմք ընդունելով այս պահանջը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը չի կատարել 2014 թվականի հունվար-մարտ ամիսների համար նախատեսված վճարումները:

7. 02.04.2014 թ. թիվ 1142 ՍԴ որոշումից հետո ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 17 աշխատակիցներ գրավոր դիմում են ներկայացրել՝ պահանջելով զերծ մնալ աշխատավարձի կուտակային կենսաթոշակի պարտադիր վճարումներ հաշվարկելուց և փոխանցելուց:

8. Կազմակերպության աշխատակիցները վկայակոչել են Սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշումն առ այն, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչվել է Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր: Աշխատակիցները նշել են, որ գործատուն, պահումներ կատարելով, կխախտի իրենց սեփականության իրավունքը, այն է՝ սեփականությունը իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքը: Աշխատակիցները նաև նշել են, որ Սահմանադրական դատարանը Օրենքի 7-րդ, 8-րդ և 76-րդ հոդվածները, թեպետ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն նշել է, որ դրանցով նախատեսված իրավակարգավորումները չեն կարող հիմքում ունենալ, մեկնաբանվել և կիրառվել մարդկանց հայեցողություններից անկախ, նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում:

9. Իրավաբանական բաժնի եզրակացությունից պարզ դարձավ, որ Սահմանադրական դատարանը ճանաչել է քննարկման ենթակա օրենքները Սահմանադրությանը հակասող և անվավեր, հետևաբար դրանք կորցրել են իրավաբանական ուժը որոշման հրապարակման պահից, իսկ որոշման 7-րդ մասի հետ առաջացած հակասության պարագայում անհրաժեշտ է առաջնորդվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասով: Հետևաբար, ՍԴ որոշումը անհրաժեշտ է կիրառել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների դիրքորոշմանը, իրավունքների և օրինական շահերի գերակայությանը համապատասխան:

Քննարկելով Կազմակերպության աշխատակիցների դիմումները,լսելով Կազմակերպության աշխատակիցների, անդամների, իրավաբանների, հաշվապահի դիրքորոշումը և կարծիքները, առաջնորդվելով Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ամրագրված և ՍԴ որոշմամբ մեկնաբանված անձի իրավունքների գերակայության սկզբունքով, հիմք ընդունելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը, «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կանոնադրության» 2.1-րդ և 3.2-րդ, 8-րդ կետերը, ժողովը ձայների մեծամասնությամբ՝ 15 կողմ, 1 դեմ ձայնով

ՈՐՈՇԵՑ

1. ստանձնել կազմակերպության անդամների իրավունքների, օրինական շահերի ներկայացումը, պաշտպանությունը դատարաններում, պետական կառավարման մարմիններում:

2. 2014 թ. հունվար, փետրվար, մարտ ամիսների համար Կազմակերպության որևէ աշխատակցի կամ Կազմակերպությանը ծառայություն մատուցած որևէ անձի համար չհաշվարկել և չվճարել պարտադիր կուտակային վճարումները, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը դիմել է նման պահանջով:

3. 2014 թ. ապրիլ-սեպտեմբեր (ներառյալ) ամիսների համար Կազմակերպության որևէ աշխատակցի կամ Կազմակերպությանը ծառայություն մատուցած որևէ անձի համար չհաշվարկել և չվճարել պարտադիր կուտակային վճարումները, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը դիմել է նման պահանջով մինչ 2014 թ. ապրիլի 18-ը՝ ժամը 12:00-ն:

4. Մինչ 2014 թ. ապրիլի 17-ը մշակել և հաստատել ՍԴ որոշմանը համապատասխան մշակված նոր օրենսդրական կարգավորումների ընդունումից հետո կուտակային վճարումներ կատարելու նպատակով ապրիլից մինչ այդ կարգավորումների ուժի մեջ մտնելու ժամանակահատվածը հաշվարկելու և վճարելու համար աշխատակիցներից և ծառայություններ մատուցող անձանցից գանձման ենթակա գումարների վերադարձման պարտավորագրի ձևը, որը պետք է ստորագրի կազմակերպության աշխատակիցը կամ ծառայություն մատուցած անձը:

5. Մինչ 2014 թ. ապրիլի 20-ը Կազմակերպության իրավաբաններին հանձնարարել մշակել Կազմակերպության անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, կուտակային վճարների չհաշվարկման և չվճարման արդյունքում հնարավոր բացասական հետևանքների հաղթահարման մարտավարություն:

Ժողովի նախագահ Արթուր Սաքունց
Ժողովի քարտուղար Վարդինե Գրիգորյան
Մասնակիցներ՝

Օֆելյա Զալյան
Արտուր Հարությունյան
Արայիկ Զալյան
Անի Չատինյան
Սյուզաննա Սողոմոնյան
Տաթևիկ Սիրադեղյան
Անահիտ Չիլինգարյան
Սուսաննա Դավթյան
Հասմիկ Կարապետյան
Գոռ Աղաջանյան
Մարիետա Թեմուրյան
Արմինե Սադիկյան
Նազելի Մովսեսյան